 տատուն .
 Վ աշ խոհեմընտիր՝ այլ և բանիբուն,
 Եբրեւ վարդ կարմիր՝ տեսանի սիրուն:
 Ունի զայդ ևս՝ հոգի հեղութեան,
 Բ աս սաղմուերգու՝ երջանիկ
 ՚ի աւթեան :

Ճ'իշտ թեսակոխողն՝ ՚ի չքնաղ կայտնն,
 ՚ի աջ գիսոէր սոյնակէս՝ ՚Դաւ իթ
 սրբազնն,
 Ե ու որ պատրաստէ սէզան
 սրբութեան,
 Ենեղ անմահն՝ երկնից վեհ Վաքայն .
 Որում հրաւ էր տայ՝ ազգիս Կրտմեան,
 Պատրաստ սէզանցն՝ յաւիտենական .
Օ ի ա՛ դ մոռացայ՝ զեօթնապի
 ՚ի աւթեանն,
Օ լուսասաղարթ՝ դրախտին
 վայելմանն .
 Որոց ըզմելին՝ ունի ՚ի բերան,
 Անշակէ տենչմամբ՝ տալ պտուղ
 զարփեան,
 Երիմբ թափանձէ՝ առ ՚ինն
 էութեան,
 Որ բազմի Ալթոռ՝ քերովքէական .
 Պահել զանձն իւր՝ Վջն անեզական,
 Որ հովուէր կանխաւ՝ զազգն
 ՚ի սրայէլեան :
 Պազատի հոււով՝ առ կոյսն
 ուզիեան,
 Չքնաղ թագուհին՝ քաղցրալուր
 մայր Տեառն .
 Ենձրեւել նմա՝ կաթն կուսութեան,
 Որ այնու սնաւ՝ նորածին Վաքայն :
 Օձան կարդայ միշահուակեն զայն
 Օ աղօթս նորին՝ Տեառն հաճոյական .
 Ե յս է, Յակովայ՝ ճգնաւորական,
 Մծբին քաղաքի՝ Հայրապետ կարդան:
 ՚ի միջնորդ նմա՝ ընտրեալն այն,
 ՚ի բաժակարբու՝ Յակովը
 առաքեալն .
 Որ ունի զանուն՝ այս յատկական,
 Ե բաներեգէս՝ որդի Օեբեթեան .
 ՚ի ամէ ինձ ասել գիմօք ինդական,
 ՚ի ու բարի եկիլ Հայր մեր հոգեկան,
 ՚ի ալուստ քոյ եղւ՝ առ իթ
 ցնծութեան,
 Տինա խրախանամք՝ սրտիւ եռացման:
 ՚ի ցցէ սա յաւէմ մեր եկաւու
 լիւալն,

Խանդակաթ սիրութիւն՝ որ զմեղ
գուռեալ.
Դեպ հանդաբառեցոյց՝ սիրոս մեր
ճմեալ,
Կնելով՝ ի տան՝ քերկրութեամբ
լուալ:
Փառք թագաւորին՝ ստրկամեծար
խնամական գմութիւն՝ որ ստրուկս
պատուեալ.
Խոր ծերացելցոյն՝ արժանի արտոր,
Համբուրել զԱշն՝ քեռորդւոյս
զօծեալ:
Ազօթեա առ Տէր՝ Հայր գորո
վական,
Օք արժանասցուք՝ չքնաղ տեւ
սութեանն.

Երտողին յաջմէ՝ Հօրն անեղական,
Ոյնոկ արմաւոյ՝ փիւնիկ գերարփեանն
Ոյր իրախոյս տայ մեղ՝ յանձան
ձիչն այն,
Եկայք Հօր իմոյ՝ ժառանգքը օրհն
նութեան,
Փառք սրատիւ նմա՝ այժմ և յաւի
տեան,
Կաւոյս կազմողին՝ Հօր իմաստու
թեան,
Հայութիւնն կ:
1871 Մարտ 23 Սուհանդի թուլ
յաշուալէյ
Տիգրանիերոց:

ՀՐԱԺԵՏ ՊԱՆԴԻՏԻՆ

Վա. խանդ յիս բողբոքի այսօր, խանդ հայրենեան
Որ ՚ի սէր հայրենեաց զիմ սիրո վառէ հայկեան,
Եւ նոր իմն արդ խրախոյս՝ արծարծեալ յիս այսօր
Հրաւեր կարդայ ահա, հէգ սրտիս հրատոշօր:
Որանալ ՚ի Հայաստան
Ողջունել զՀայաստան:

Ոչ, քանի յոյժ դառն է ընդ աստեղօք օտար
Պանդխատին չնչել շունչ, և կալ անդ ընդ երկար,
Լըրդնում արդ աւանիկ, յարեւ մեր վեհ քաջաց
Ոքք մեռան և հանդեան ՚ի փառս հայ հայրենեաց.

Երթալ ՚ի Հայաստան
Համբուրել զՀայաստան:

Ուստի արդ նիստ ՚ի ձի՝ սրտիւ քաջ և աղատ
Օսյո ձեզ որոտամ Հայք, ահա բաց ՚ի ճակատ,
Չեզ, իմ սրտի հատոր, ո՛հ եղբարք իմ պանդուխտ
Բարեաւ արդ կացվեք գուք, զի սցս է իմ սուրբ ուխտ:

Ո ազել ՚ի Հայաստան
Գրկել ոհ, զՀայաստան:

Վւխտ զոր ուխտեաց անձն իմ և սիրո հէգ և թշուառ
Ոյնչ նա էր ընդ եղբարցդ, յայդ ՚ի լալեաց ՚ի վայր,
Յուշ ձեզ իմ երդոց ձայն, զոր ես երդէի միշտ,

Ո՞ւ կող անկարեկիր ընդ հայրենեաց մեր միշտ :

Այլ գնալ ՚ի Հայաստան

Ոփոփել զՀայաստան :

Երթամ զի հայրենեան արդ ապօրէ զիս հուր ,

Ո՞ւր հայրենեաց փարիլ զաւերակօք տիսուր ,

Գնամ ես այսօր , ցողել զպասքեալ զիմ շրթունս

Յէ՛ փրատայն , յԱ՛ բավսայն ադինաբռւզիս յակունս :

Երգել անդ զՀայաստան

Օրհնել անդ զՀայաստան :

Գնամ յոյս ՚ի սիրու , տապ զիմ համբոյր անձկայրեաց

Օ աճիւնս մեր արի հարց՝ ամիսփող ցուրտ շիրմաց ,

Ո՞ւ տայր եղկելոյս , զի այս խանդ սրոտատոշոր .

Զնոյն առնէր և ձեզ , որպէս և ինձ այսօր :

Թուշիլ ՚ի Հայաստան

Թուղիլ ՚ի Հայաստան :

Այս է իմ աղաղակ , այս սրոտիս և փափագ

Օ ո՞ր կաթոգին անձկայր ՚ի վաղուց իմն հոգեակ .

Երգնում ՚ի սուրբ ՚ի խաչ , երդնում ՚ի ձեր ձակատ

Թէ յայնժամ հայրենիք մեր հէկ՝ լիցի աղատ ,

Երբ գնամք ՚ի Հայաստան

Վինստ գրկել զՀայաստան :

Խակ և սուր իմ ձիս՝ երբ կոթեն զհարց մեր հող

Ուխտեմ , յերկիր անկեալ պագանել աշք ՚ի ցող

Օ երկիր մեր հարց , զերկիր յոր և նորա անկան ,

Երկնի տուեալ և փառ՝ Անմահին գիրկ թռան :

Վուշլ . Հայաստան ,

Օրհնեալ լեր յաւիտեան :

Խակ թէ անդ ոք օտար՝ ՚ի հայրենին իմ հող

Ո՞ւս սպառնալ ժպրհեացի , յիմ սիրու քաջ աղդել դոլ .

Ա շնմիտ , որոտացից անդէն սրտիւ անահ ,

Կտտ ինձ վասն հայրենեաց փրկութեան քաղցր է մահ .

Օ ի մեռանել միայն

Եկի ՚ի Հայաստան :

Եւ մեռաց . . . այլ առիս չեւ հասեալ մահուն մութ

Լնէծս արձակեցից ՚ի թշնամին անգութ ,

Եւ հեծս սրոտի օրհնից , առ Հայաստանն իմ մայր ,

Եւ խոնարհեալ զիմ գլուխ . հանգեաց գոհ յամն յամայր

Ի սուրբ ծոց մայրական

Իմ մօրն Հայաստան :

Ասաց , երիվարին ահա մորակ ՚ի կուշտ

Սրացաւ , հայրենեաց ՚ի սէր մեռանել անշուշտ . . .

Ո՞ւսան նա , հայրենեաց եղեալ քաջ նահատակ ,

Ա. Արքինից յիւր կ գլուխ ընկարաւ փառաց պատկ։
Վանդի այս եւս մեզ յոց
Փրկիւ մեր տեր Յիսուս։

Արտադր Տ. Մինաս
Պարտիլիկ։

Կ Ե Ս Ա Ր

Կեսար յիսունելից տարուան մեռաւ։ Ոինչև քառասուն և երկու տաւրեկան հասակն քաղաքացիի կարգեն չէր ելած, և սակայն իւր հանձարը կը յայտնէր թէ խիթալի տիրապետութեմբ մը պիտի ձեռնարկէ։ Տան և չըս տարուան մէջ աշխարհս նուածեց. բնաւ մարդ մը չը գերազանցեց զայն, տաղանդի, փառասիրութեան և բազդի կողմանէ՝ ոչ մէկ զօրապետ չը կրցաւ ազգել աւելի անձնուիրութիւն մը իր վինուսրաց, որբ այնշափ սիրով վառուած էին անոր համար, որչափ իրենց նախնիքը երբեմն հաւսրակապետութեն համար։ Կախնեաց քաջութեամբ մը զանոնք կը բորբոքէր։

Նշպէս բաղդը՝ նոյնպէս բնութիւնը ձեռնուու էր կեսարին։ Հասկը բարձրէր էր, իր գոյնը պայծառ սպիտակ, գլուխ ձուաձեւ, երեսը լեցոն եւ գունաւոր, աչքերը սեւ և կայտառ և մարմինը բարձրուգել էր։ Իւր կորովի կազմուածքը դալիստենդի քանի մը հարուածներով միայն այլայլած էր։ Իւր գնայքը ծանր և վեհ և ձայնը ջինջ. իր ամեն շարժմանց մէջ աղնուական շրջնորհք մը կը փայլէր. թէպէտ այն չափ խիստ էր և անխոնջ աշխատասէր, որչափ աներիմիւդ վտանգի մէջ, բայց եւ պանդէս ոչ ոք անոր չափ դէմքի պշրանաց եւ հեշտութեանց

մէր չէ ունեցած։ Վարդելի էր իրեն հաճայ երեւալ, մնշպէս հրամայել. միշտ փառաւոր հանդերձներ ուներ վան, նոուրը կերպաններ և սրանչելի ծովեր։ Վա ելցնէր իր զարդուց վրայ ամենէն գեղեցիկ մորդարիտները և ամենապատռական քարերը։ Կը զարմանար մարդ անոր պալատի մէջ գտնուած բազմաթիւ անդրիներու և ամենէն երեւելի ճարտարարուեստներու ձեռակերտաց վրայ։

Դերմանից անտառներու մէջ, մնշպէս Վարդիկէի աւաղներու մէջ, կը տեսնուէր իր վրանին մէջ փայլուն գորդ մը և կակուղ բազմոցները. իր տանը մէջ կը թագաւորէր խիստ կանոնաւոր և խիստ մանրախոյզ բարեկարգութիւն։ Իր տանը հազարա պետք շվթայի զարկաւ սեղանակաց իր կերածէն տարբեր հաց մատակարելուն համար։

Ուշպէտե կեսար անձնատուր եղած էր կրից, բայց խնճյից չափազնցութիւնը իրեն անծանօթ էր։ Կատոնն կ'ըսէր անոր համար թէ՝ հասարակապետութիւն մը կործաննել ուղղ մարդկանց մէջ, առաջին բարեխառն ու ժուժկան ինքն էր։ Դիմագրութեան չէր հանդուրժէր, առկայն կատակի աչք կը գոցէր։ Իր միաբն հատու էր իր սրոյն պէս։ Տուն կուտար շտո մը նօտարներու, (ինքը կ'ըսէր և նոքան կը զրէին), միանդամայն այլ և այլ լեզունետով։ Վա-

զաքականութեան գաղտնիքը պահեւալու համար նշանակիր հնարեց : Ձե վարելու ատենը քերթուածներ կը յօրիներ և կառքի մէջ պաշտօնական դրութիւններ կ'ընէր : Այսպէս տակ իր յիշատակները կը խմբագէր և պատերազմի ատեն օրէնքներ կը յզնար:

Չը կար չուզմացեցի զինուոր մը իրեն չափ կիրթ զինավարժութեան մէջ . նա կատաղի ձիերը կը ամնաւահարէր . թէ արեգակի և թէ եղեամի տակ բացդոււխ կ'ընթանար . օրը յիսուն փարասիս ճամբայ կ'ընէր ձիւ ով կամ կառքով և ամէնէն սրբնթաց գետերը լողալով կ'անցնէր :

Խորին քաղաքագէտ , պերճախօս ատենաբան , ճշմարտախօս պատմաբան , աներիխող զինուոր , արթնամիտ տեսուց վեհանձն յաղթող բաղդով բարձրացեալ և փառքով պատկեալ . կեսար՝ որուն համար ըսուած է թէ առաջն սպարապէտ և գերաստ տիժան աշխարհակալ է , ըստ ինքեան տիեզերական մարդ մը եղաւ : Կորահանձորը իր տիրած աշխարհին պէս լայնածաւալ էր , բայց ինչպէս որ չափատոսի բուրգերուն վրայ զարմաւ նալով կը սրանցանայ մարդ՝ նկատելով որ ժամանակի յաղթող այս կցյութը , որոնք թէպէտեւ անչափ արեան և արծաթոյ գին են , սակայն և ոչ մի ռ գուտ կ'ընծայեն մարդկային ազգին . նոյնպէս կը ցաւի մարդ երբ կեսարը նկատէ , որուն անունը դարերէն անցնելով մինչեւ մեղի հասած է , բայց մարդկութեան համար աղետալի և աղատութեան բեկորներուն վրայ բարձրացեալ իւր հսկայածեւ մէծութեան հիմը առաքինութիւնը :

ՀԻՆ ԵԽ ՆՈՐ
ԵՐՈՒՍԱԼԻՄ *

Յայտնի փաստ մ'է , որ ինչպէս ամեն մի մարդ ուսպահական խնդիր մի ունի կատարելու , այսպէս և ամեսով ժողովուրդներ : Քանի որ այն գտղափարը որ ժողովուրդ մը կըներկայացնէ , ժամանակակից է , այնքան ալ կ'արծարծի նորաձառագայթները – այն է գաղթականութիւնները : Այս գաղափարը որ հին Ասիա կը կրէր , արդէն վաղուց է գերեզման մտել : Այս պատճառաւ Ասիա ոչ միայն անցեալ մարդկային մտաց մշակութեան աւերակներով այլ և ամեն ուրեք ժողովուրդներու աւերակներով ծածկած է . և նորագաղթականութիւնները , ի բաց հանելով միայն մէկը , կամ արդէն կործանուեր անհետացեր են , կամ հեծելով ծերութեն թուլութենէն , ոտքին մէկը գերեզմանին մէջ է : Այս մի հաստ գաղթականութիւնը , որ ասիական կեանքէն զինքը աղատելով երկրիս ամեն կողմերու վրայ սփուած է , չըելիցն է : Երկու տարի առաջ եղած ազգահամարը երկրիս վրայ գտնիրւած չըելից թիւը եօմը միլիոնի կը հասցնէ , որ այս ժողովրդի ծաղկման ամենաբարձր ժամանակին եղած Կաթի ազգահամարին հետ կատարեալ կը համաձայնի : Այս ժողովուրդը որ երկնքի ամեն բաժնի տակ , ամեն ազգերու մէջ , իր յատուկ բնութիւնը , հնուց պինդ գրկած վարք ու բարբը մինչեւ մեր օրերը սպահած է , և ընա-

* Աղատ թարգմանութիւն գերմաներէն նորերս 'ի ըստ Ընծայուած Der Orient . . . գրքէն ։ Թարգմանիչը շատ մորեր – մանաւանդ քաղաքական – բաց է թողեր բնագրէն , որոնք մեր հասարակաց ընթերցանութեան սնյարծուեն , և մասսամբ ընդհանուրին անհաղորդելու :

Եելով որ երկրագնդի վրայ անօրինակ ափուռած է, իւր միութիւնը, նաև թիւը ամփոփոխ պահած է, այս ասիական հնութեան մի հատ զարմանալիք գաղթականութիւնը մեր աչքի առաջ դեռ կանգնած է, իբրեւ անմեկնելի նուրական նշանագիր մը։ Այս գաղթականութիւնը, կամ ձիցդասել այս կուտակութիւնը բազմաթիւ գաղթականներու, դեռ կենդանի կանգնած է մեր աչքի առաջ, վասրն զի դեռ խնդիր մ' ունի լուծելու, դեռ դեր մ' ունի խաղալու, Երդէն իւր յաշխարհ երեւալուն պէս կրզար այս իւր կոչումը, զինքը “ընտրեալ ժողովուրդ” ո անուանելով։ Հրէից միութեան կեդրոնը միշտ այն կորուսեալ ասիական մայրենի տէրութեան մէջն է մնացած, զըր կրկին ժառանգել բոլոր գաղթականները կարօտով կը յուսան և կը ճգնին անդադար։ Իուռն զօրութեամբ այս տեղեն հալածուելով, ՚ի սկզբան ըստ ձգեցին սոքա իրենց հայրենիքը նոր մը որոնելու, այլ ժամանակաւոր իշեւաններ վնասուելով կը սպասէին մինչեւ հնար մը գտնուի վերստին դառնալու իրենց սրբազնն տեղիքը։ Այս գաղթականութիւնները ուրիշներու նման անկախ տէրութիւններու ըստիսուեցան, այլ իրենց գաղթական նշանակը հաւատարիմ պահպաննելով կը չարունակէն այսպէս մինչեւ ցայսօր, վասն զի անխախտելի հաւատով կը յուսան Ասուրը Դրոց երաշխաւորութեանը, որ օր մը պիտի վերադառնան իրենց հայրենիքը եւ երբէք չեղած փառաւորութեան ու աւագութեան հասնին։ Եւ միթէ չի պիտի հաւատով ակնունին այս երջանկութեանը, երբ որ իրենց խոստայուած է, երբ որ իրենց անտեսանելի թագաւորը տասնութը անգամ

աւերեց Կրուսաղէմը և կրկին կանդնեց, քանիցո անդամ հալածեց ժողովուրդը և կրկին ժողովեց։ Այս յու սովորենց երկնային թագաւորին միայն ապաւինելով կը դիմանան ամեն կամածին օրինաց, ամեն բռնաբարութեան։ Տեսնելով որ իրենց շրջապատող ժողովուրդները պանչելի զօրութեամբ կը բարձրանային և ապա իբրեւ եղեւ մը ջախջախուելով մէկդի կը ձգուէին, այն ինչ իրենք այս ժողովուրդոց սարսափելի հրդեհներէն խնայուելով, անօրինակ հալածանքներուն մէջէն կենդանի դուրս գալով կ’ապրին (*): Ո՞վ կարող է այս տեղ ըստ հաւատող վերին պաշտպանութեան մը։ Վհա և այս պատճառաւ Հրէայք ըստ այնու իրենց ժողովրդական ներքին միութեանը, չեն մտածեր բռնի և ինքնազօր աշխարհի բազրերու մէջ մտնել և ինքնագլուխութեան թեկն ածել, քաղաքական մարմինն մը կազմել, և սորահամար նոցա անտեսանելի թագաւորը առաւել միջոց կուտայ նոցաձեռքը։ Հրէայք որ երբէք վաճառական ժողովուրդ չեն եղած, բռնի իրենց սեպհականեցին այս ձիւղը, կենոց պահպանութեան և վաճառականութեան հանճարը ճգամբ ձեռք բերելով, այնպէս յառաջացան այս շրջանի մէջ, որ վերջապէս տեսակ մը աշխարհակալութեան հասան, արծաթակալութիւններ ընելով։ Ո՞ի և նոյն ժամանակ յամառ ու հաստատ Ասուրը Դրոց խաստմանցը կը հաւատային, միայն քաջ գիտենալով որ ոչ ՚ի ձեռն աշխարհակալութեան, այլ խաղաղ ճանապարհաւ պիտոյ է ջանալ դիմել գէտ ՚ի իրենց ապագայն։

Վմերիկա, այս զանազան ազգային

(*) Հայոց աւ կը յարմարին այս խօսքերը.

տարերց խառնուրդներով կազմեալ զարմանալի երկիրը, կը փորձէր այս խնդիրը լուծել: Անման տեսարան մը կը բացուի մեր աչքի առաջ: Այս անգամ գաղթականութիւններն են՝ հայրենի տէրութիւնը գաղթողները: Այս, Նըրէից պատմութեաննէջ այս նոր երև ոյթ մը չէ. Բարիլսնեան գերութենէ ետքը, գրէ թէ նշյնը պատահեցաւ, միայն այն ժամանակ վերադարձող Նըրէայք, բուն երկրին մէջ մնացածներն անգամ մէկ դիքչելով, միայնակ վերականգնեցին Երուսաղէմը և նորա Տաճարը: Այս ինչ այժմ այս գաղթականութիւնը տիեզերական նորաձեւ քաղաքակրթութեան զգեստներով կը ներկայանայ: Այս անգամ վերադարձը ոչ թէ եւրեք ցեղէն ետք կը յաջողի, կամ եւրեք կառավարութեան ժամանակէն, այլ գրեթէ երկու հազար տարիէն ետք, և ոչ թէ մերձակայս արեւելքէն, այլ հեռաւոր արեւմուտքէն, երկրագնդի միւս կիսէն:

Նիւսիսային Մերիկսոյի աշատ տէրութեան մէջ, քանի մի տարի առաջ, նոր աղանդ մը ծագեցաւ, « Ուսիսայի Շկեղէցի » անունով, որոյ հիմնադիրը և սրծարծողը Պարոն Ադամն էր: Այս նոր աղանդը, որ Ուսիսաքան վարդապետութեան և սկզբնական քրիստոնէական հաւատոյ խառնուրդը մ' է, Նըրէից աչքին այնպէս խորդ չերեւար՝ վասն զի Նըրէայք եւս կարող են պատկանիլ այս աղանդին՝ մի և նշյն ժամանակ Նըրէայ մնալով: Այս զգեստներով Մերիկայէն քաջուեցաւ գաղթականութիւնը, երեսուն ընտանիքէ բաղկացած հարիւր յիսուն հօգիէ, Անդամնի հետ դէպ ՚ի Պաղետուին եկաւ և հաստատեց իր բնակարանը՝ Եափայի մերձակայքը: Մերիկայի հո-

վանաւորութեան տակ այս տէղ հիմն ձգելով՝ նշանաւոր կալուածքներ և հողեր գնելով, զարմանալի կերպով սկսաւ Տաճիկ, Արաբացի, նաև Ջէլլու բնակիչներուն հետ բարեկամաբար ու խաղաղ յարաբերութեան մէջ ապրիլ^(*):

Երուսաղէմ առանձին դիրք մ' ունի, անմիջապէս զառ ՚ի վայր բարձրացող լեռներ կը շրջապատեն զայն: Այս լեռներու վրայ սիռած են նախնի Նըրէից գերեզմանատուններ, ժայռերու մէջ քանդակեալ փոսեր, ուր անապատականներ միայնակեաց կեանք կ'անցուցանէին: Երուսաղէմն այնպէս շրջապատած է այս մեռելոց քաղաքով, որ կենդանիք անդադար աչքի առաջ ունին գերեզմանները՝ քանի որ իրենց հայեցուածքը ՚ի վեր կը համբառնան: Այս յաւեժական յիշատակի արժանի տեղերը կը փակուէր քանի մ' անգամ մարդկային թիթեռը պատեաններու մէջ, որոնք վերջապէս ձգելով թեւեր կ'առնէր: Այսօր կարող ենք կարգաւ վերստին ճանաչել այն ձգած պատեանները: Ամենէն առաջ կ'երեւայ մեղ սորա բնակած Աւլավամ գիւղը իւր ժայռի խոռոչներով, ուր մարդիկ վայրենի կենդանիներէ սարսափելով կը թագչէին, վասն զի գեռ բնակարաններ կանգնելէին հասկնար ու իրենց յատուկ տուններ չունէին: Ապա ՚Եսի յաջորդներու տաճարը, զօր ընդհանուր ընդհեղէն աղատուող մարդիկ ՚ի նշան նորհակալութեան կանգնեցին: Այն տեղը ուր երկնքէն վար ընկած օդեւեւոյթական քարերը կը պաշտէին Նիմնի գաշտը իր մարդագոհու-

(*) Այս գաղթականութիւնը չեկարաց յարաւել մնալ ուստի սոյն գաղթականութեան վերաբերեալ նկարագրութիւնը աւելորդ կը համարինք տպագրել: Տ. Խ.

թեան յիշատակով , ուր յիմարաւ ցեալ մարդկութիւնը իր անդրանիկե ները բորբաքեալ հնոցին մէջ նետե լով ահուելի Ոողըքին զսհ կը բերեր . գայթակղութեան լետոր իր կուտ պաշտութիւնով . վերջապէս Ոօրիայի կարծեցեալ սրբավայրը , ընդ ամին մարդագոհութեան տեղ յաջորդող կենդանազոհութիւնը : Այս տեղ կը բազմէր նոյնպէս գահի վրայ անտեսանելի խախն բնքը , փոխանակ առառածային պատկերի , մինչև որ մարդկային հանձարը կը զարթնէր ազատ կեանքով ապրիլ մկնելով , և մարդն ինքն ալ կ'աստուածանար :

Ոարդկային կենաց վարդացման բոլոր առտիճանները իրենց հետքերը այս տեղ թողած են , որոնք նեղ տարածութեան մէջ սեղմած , իրեւ բաց գիրը մը , իրեւ մարդկային ժամանակագիրը մը մեր աչքի առջև ընկած են : Իսկոր մարդկային պատմութիւնը , իր գլուխուուր շրջաններով , աղքի աղքի տեսիլներով , իրեւ կեղզ հայելիի մը մէջ այս տեղ կեղրոնացած ամփոփուած է , և չկայ ուրիշ տեղ աշխարհիս երեսին , ուր այսպիսի տեսարան մարդու աչքին ներկայանայ : Ահա այս է պատմաւն , որ մարդ այս տեղ հրաշալի կերպով մը կը ներշնչուի , կոգեւորի նորա ամբողջսմիրան՝ ու հոգին կը գրգորի , վասն զի այս տեղ կրտեանէ նա իւր նախին վիճակի պատկերը : Այս պատմաւու Երուսաղէմ ոչ միայն բարեպաշտութեան՝ այլ նաև գիտութեան ու իւտագնացութեան տուրք տեղ մ' է , և մոտածող մարդկութեան համար յաւ լիսեան սուրբ կը մնայ : Ոիսյն այս կողմանէ չէ որ Երուսաղէմ իրեն նըմանը շունի երկրագնդիս վրայ , նորա գիրքը , շենքն և շրջակայքն ալ չունին իրենց հասուր :

կանգնած է բարհատքի մը մերմակողմբ որմէ իր շնուռթենիւթը առնուեր է : Այս քարհատքի մէջ նաև ոյսօր կարելի է պարզ աեսնել , թէ ինչ կերպով են կորեր ժայռերէն այն ահազին սալսքարերը (որոնց մէջ կան 28 ոտ երկայնութեամբ) տաճարի և քաղաքի պարիսպներու շնութեան համար : Կ'երեւի որ շատ անգամ մշակները ձգեր են իրենց գործը , և այլ և այլ ժամանակ շարունակել : Վմբողջ քաղաքի տակ ստորերկրեաց անձաւներ , այրեր ու փառեր կ'երթան , ուր Հոքայք թշնամիներէ շրջապատռելու ժամանակ , կը թագչէն և նեղի ընկած ժամանակ՝ այս ստորերկրեայ անձաւներէն գաղտնի դուրս գալով , դրսէն իրենց կարիքները կը հոգային : Եւ ահա այս է պատմաւը որ բազմաթիւ զօրքերուերկար պատշարմանը դէմ կենալով՝ կը դիմնային : Յարութեան եկեղեցւոյ մէկ մասին տակն ալ , հին ընդարձակ աւաղան մը կայ , որ անհատահսուալիքիւններէ պատուական համավանդուր կ'ընդունի , և բոլոր բնակիչներու պիտացքը միայնակ լրացնել կարող է (*): Բաց յայսմանէ քաղաքի տուները այնպէս են կուտացած որ իրենց ընդունած անձրեւի ջուրը աւազանի մէջ կը վաղեցնեն ու նորա կուսոհպանն : Քաղաքի շրջակայքը գտնուած միւս աղքեւրները , Ոարեմայ , Աերվամի և այլք , իրենց աղքհամ ջրավ , ու երբեմնական շարժութեամբ , ցոյց կուտան որ ծովու հետ , տեղատուաթեան և մակրնթացութեան հետ հաղորդակացութիւն ունին : Ոօրեայի սպառաժի տակ կ'ասեն որ լսելի է նաեւ ծովու շշունչ ու խոխոջիւն :

(*) Այս աղքիւրի գոյութիւնը անցայտ է բնակչուց : Տ. 10.

Արուսաղեմի պարիսպները, որոնք երբեմն անմատչելի էին թշնամեաց, նոր պատերազմական վարժութեան դէմ գնելու ոյժ ալ չունին, վասն զի նոցա ստորին հիմքը ու դիրքը հին հին ժամանակներէ մնացած էն անփոխիս մինչեւ ցայսօր, ընդ որս և 'Դաւթի դղեակը իր աշտարակներով, որ իրենց հսկայաձեւ փիւնիկեան ճարտարապետութեամբ կ'ապշեցնեն նոր աշխարհը : Այս հսկայաձեւ հին տաճարի պատի կտորներէն մէկու վրոյ էր Հրէից ողբատեղն, ուր ամեն ուրբաթ օր, արք և կանաչը, ծեր ու մանուկ կը ժողուէին, կիսամաշքարերը համբուրելով, գլխուն վայ տալով, իրենց անցեալ մեծութիւնն ու փառքը կ'ողբային, ինչպէս և այսօր կ'ընեն : Այն հայրենական սրբավայրին տեղը այսօր կ'ամբառնայ (Օմար-Վզկիթը), որ Վեքկայէն ետք Տաճիկներու ամենասուրբ տեղն է : Սպոնտն այն տեղ կանգնեց տաճարը, ուր Աբրահամ իր խաչակ որդին զոհել կ'ուզէր, ուր Աստուած մարդագոհութիւնն ի կենդանաղուհութիւն փախարկեց : Աակայն մարդազօհութիւնը գեռ չէ վերցուած ոչ քրիստոնեայ և ոչ անքրիստոնեայ երկիրներու մէջ. գեռ հավարաւոր մարդկանց կեանք, իրեւ հազար եզնեայ զոհաբերութիւն, մարդկային կատաղութեան և յիմարութեան զի՞ կըլան: Մարդ փախանկելալ միայն իւր գործի կամ արարմունքի անունն ու տիտղոսը կը կարծէ թէ ամեն բան կատարած է : Հրէայք մարդազօհութիւնը վերցնելով, մի և նոյնը ուրիշ անունով պահեցին : Թանգ նստաւնոցա այս, և մինչեւ ցայսօր մէկի փախարէն հավար կը հատուցանեն, վասն զի մարդու ամեն ապօրինի արարք, նոյն նոքը՝ մարդէն կը հանէ իր վոէ-

ժը: Այս, ինչ որ Հրէից համար կ'ասեմ, ամեն աղգերու, ամեն ժողովրդի, ամեն ժամանակի շոշանի վրոյ գործադրելի է . մէր աչքով նորեր տէ սակը տրա նման տօրսափելի տեսարան մը^(*): Առ հստարակ Հրէայք իրենց ամենատեսակ վիճակներով մարդկութեան մէջ խորհրդական նըշանակ մ' են, ուր իրեւ հայելոյ մէջ՝ մարդկային ցեղի այլ և այլ վեճակը մեր առջեւ պարզ կ'երեւաց :

Արուսաղեմէր՝ ուրացն մարդարէ ական բառերը հնչեցան. 'Վրբ աղգեր աղգերու վրոյ յորձափուին, վիրար կոտորեն, գիտացէք որ աշխարհիս իրաց վախճանը մերձենալու նշանն էր, վասն զի երբ աշխարհ մարդաղը հութենէ ըրբարձրանար ու աղաւեր, պէտք է որ ՚իձեռն մարդաղը հութեան կօրնչի: Կը տեսնենք որ Քրիստոնէութիւնն անգամ բոլորովին ազատ չէ մարդաղոհութէ, բայց կը աեսնենք նայնպէս որ քրիստոնէութէ ծոցին մէջ միայն գաղափարներ կը զարթնին, որոնք կենդանութեան ոյժ ցոյց տալով կը ջանան իրադորձուիլ: Այս է որ յաս կուտայ յուսով մեղանչող Հրէից, որ այն մարդարէ ութեան երկրորդ մասը նոր պիտի կատարուի, Ուդին Աստուծոյ նոր պիտի աշխարհ գայ, ուղղէ մարդկութիւնը և միայն ընտրեալները տանի գէպ ՚ի ճշմարիս կեանքը : Այս յուսոյ խորհրդաւոր նշանն է՝ Արուսաղեմի մօտ ՚Զիթենեաց լեառը: Այս լեռան գագաթին վրայ փարիսկ տաճարի մէջ, բատ աւանդութեան, Փրկչի ստի հետքը քարի վրանդակած է, ՚ի նշան վերջին անգամ այս տեղ ուրբը երկիրի վրայ դը-

(*) Անկատած 1806 ի Գերմանական պատերազմի կուղը միշել. Հապան անցած տարուան Բրուսո—Գերմանական առևկալի պատերազմի մարդաղը հութեանց համար ինչ ըստելու է: Տ. Խ.

ներդյն, այս լեռան գագաթին մարդու աջք յանկարծակի կը հիանայ կ'ապշլ զարմանալի տեսարանէ մը: Ո՞ր կողմէն կը տեսնէ՝ խորը: այնու առ մենայնիւ լեռանց վրայ, փառքէն ընկած՝ բայց փառաւոր ու հարուստ առագայով լրուսազէ մը, որոյ սրբավայրեաց մասին երեք տարբեր կրօնք կը վիճեն (Քրիստոնէութիւն, Հրեւութիւն, Խոլամութիւն): Ո՞իւս կող էն սուդ և ամայութիւն: Ո՞եռեալ ծու վը ահռելի Ասդոմի լեռան հետ կարծես պղնձի պարիսպներով կը փակէ յաւիտեան այն կողմի ուշարհը— անօդնականութեան պատկեր մը անմիթարսւթեան պատկեր մը:

Այս երկու հակառակ տեսարաններու մէջ տեղ կը բարձրանայ մշտականաչ ձիթենիներով, ամենուն համար սուրբ Շիթենեաց լեռուր՝ որ շրջապատած է այն երեք տարբեր կրօնքերու աւանդութիւններով: Այս տեղ, այս լեռան վրայ կուգար սիրով «Տէրն ո, իւր երկնաւոր կենաց վերջին երեք տարիներն իր աշակերտներուն հետ: այս տեղ ամեն կողակցոյ նորա յիշատակը կը կրէ: այս տեղ կը տեսնէր մարդկային աչքը՝ որ նս ընդ օդս գնալով կ'աներեւութանար: — վերջապէս այս տեղ կը պատասեն մարդիկ նորա վերագարձին: Ծնչուշ՝ ինքնին պիտի համարուէր այս լեռու ամենէն ակընկալեալ Խոտուածութեան վերջին դարստեան տեղը, ուր կենաց կամ մահուան վճիռը տիեզերական դատաստանաւ մը որոշելու է: Եւ իրաւ Հրէայք իրենց Ո՞եսիայի գալստեանն այս տեղ կը պատասեն, այսպէս և Տաճիկները իրենց մարդարէի կրկին երեւմանը⁽¹⁾: Բայց ամենուն համար

Շիթենեաց լեռու վերջին դատաստանի տեսարանին տեղն է: Մարդպիտի Յուդայի լեռները տեսած լենի, նաեւ նոցա մէջ բնակած, որ կարողանայ ըմբռնել, թէ ինչպէս կարող է մաշլ մարդու հոգին աստուածային մտածութիւններէ, որոնք անշուշտ կամ նորա մէջ պիտի կենացնանան կամ կործանեն խապառ:

Շիթենեաց լեռու Յուդայի ամեն լեռներու առաջը կորելավ, իր հայեցուածքը Ո՞իջերկրական ծովի վը ըրայէն հեռու ձգելով դէպ ՚ի Վրեւմուտքն կը տեսնէ այն կողմերու խիստ շարժուն մարդկային կեանքը, ուր որ սոյն այս խորհրդաւոր նշանակը արդէն կատարուելու վրայ է: Վրդէն Եւրոպացւոց քաղաքակիթեալ կեանքի մէջ այն տիեզերական դատաստանն սկսած է: Որդին Աստուծոյ և որդին մարդոյ, միշտ ՚ի վեր կ'ամբառայ աշխարհի տիրապետութիւնը իր ձեռն առնելու: Ուր միայն նա զինքը ցցց կուտայ, նորա առաջ կամ կը խոնարհի մարդկային կոպիտ տարրը, կամ թէ ոչ խոյս կուտայ: Վմերիկա, Վւստրալիա, Կոմա, ամեն տեղ նորա սարսափելի ու անթախանձելի դատաստանը կը վճռէ լինիլ կամ ըլլինիլ— կեանք կամ մահ: Եւրոպացւոց քաղաքակիթեալ կեանքի մէջ անգամ կը մոնէ այս տիեզերական դատաստանը՝ անխնայ փշրէլով և իր դատաստանի առաջ կանչելով ինչպէս անհատները, նոյնպէս և ամբողջ ժողովուդները: Ճամփուրդներու անընկճելի Վրիուպագը⁽¹⁾ կը կըսէ ազգաց վիճակը, ամբողջ ժողովուրդներու վճիռը արտասաննելով, տիեզերական պատմութեան մէջէն կը սրբէ նոցա գոյութիւնը: Այս տեղ նորա

(1) Այս աւանդութիւնը չը դիմենք: Տ. Խ.

(1) Ատեան դատաւորաց յԱթէնս:

վճռի տակ ժողովուրդք եղեգի նման
կը ծախսախիմն — այն տեղ ուրիշները
փողիի մէջէն բարձրանալով կեանք
կ'առնուն, և այս ժողովուրդներու
մէջ նա կը համար ու կը վշրէ այն ա-
մեն անհատները, որոնք իր առաջ կե-
նալու կարտղութիւնունին. Աշխարհիս
ոչ մի ծակ, ոչ մի անկիւն փախստակա-
նըթագցնել կարող չէ, հեռագրական
թելերը, շոգին դուրս կը քարշեն զայն
թագստենէ, (ինչպէս երբեմն Շհօվայ
ահուսարսափէ զողացող Վդամնդուրս
կը քարշէր) Այսօր ամեն մէկը միւսի
դատաւորն է, որովհետեւ ամեն մէ-
կուն շահաւէտ է, որ ամեն մէկը զին-
քը փորձէ, իր Շար, իր ներքին մար-
դը քննէ, — և այնպէս խիստ է այս
ընդհանուր փոխադարձ դատաստա-
նը, որ ամեն մէկը իր ներքին Շան պի-
տի բանայ, և զինքը այնպէս ցոյց
տայ ինչպէս է, ինչ որ իր մէջ
կայ, որպէս զի երեւի, արդեօք նա
կեանքի համար պիտանի է թէ անպի-
տան, ամեն մէկը կը քննէ, կը փոր-
ձէ, կը լրտեսէ զմիւն, և այս դա
տաւորութիւնը սովորական պարագ-
մունք դսրձած է մեզ համար՝ նաեւ
հանգառութեան ժամուն կը զբաղե-
ցնէ զմեզ, այս մեր բոլոր գործունէ-
ութեան բովանդակութիւնն է, Ո՞ւր
դպրոցներն ու վարժարաններն, մեր
դատիարակութիւնն ու կրթութիւ-
նը ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ միջոց կե-
նաց ընդունակ և պիտանի սերունդ
յառաջ բերելու : Այսպէս ուրեմն
այս տիեզերական դատաստանը ամե-
նատեսակ ձեւերով, պատկերներով,
ամեն կարելի անուններով ամբողջ
քաղաքակրթեալ մարդկութեան մէջ
կը տարածի, և այս գործունէութիւ-
նը այնպէս է մեր մարմնոյ և արեան
մէջ մտեր, որ ոչինչ չենք կարող ընել
ոչ մի բանի չենք կարող ձեռք զար-

կել, առանց սորա աղդեցութեան
կամ գործածութեան : Կրթեալ մար-
դըն ինքն իրեն անազառ դատաւորն
ալ է, այնպէս որ, եթէ նորա յա-
ջողի առ ժամանակ խոյս տալ այս ընդ
հանուր դատաստանէն, այնու ամե-
նայնիւ նա ինքը զինքը պիտի դատէ,
իրեն վճիռը տայ :

Ո՞վ կարող է այսուհետեւ ալ պրն-
դել որ տիեզերական դատաստանը
դեռ չէ սկսած : Տիեզերական դա-
տաստանի փողերը արդէն բարձրա-
ծայն կը հնչեն և երկրիս ամեն կողը
մէրը կը թնդացնեն . արդէն կը տես-
նենք որ ամեն տեղ այս թնդիւնէն
շարժեալ ժողովուրդներու գերեզ-
մանները կը բացուին, մարդկային ե-
ռութիւնը իւր գերեզմանէն, մարդու
ներքին խորութենէն գուրս կուգայ,
ամեն տեղ պիտանին անպիտանէն
կ'որոշուի, մէկը կենաց մէջ կը մտնէ,
կ'ապրի՝ միւսը մահուան գերկը կըն-
կնի : Այս Որդի մարդոյ գեռ իր
վերջին խօսքը չէ արտասանած, գեռ
ամեն գերեզմաններ չեն բացուած,
գեռ մարդու էութիւնը բոլորս վին
չէ յարուցեալ, գեռ ժողովուրդներ
կան, որոնք փողերուն հնչիւնը չեն
լած, — այս պատճառաւ է որ ըւսոյ
որդիք, Աւրոպիս զաւակները խումբ
խումբ դէպ'ի Վրեւելք կը դիմեն և
հին Ասիա կ'ուզեն շրջիլ, որպէս զի
նորա բազմաթիւ ժողովուրդները
մահուանէ յարութիւն առնելու պատ-
րաստեն, և ապա այս նոր կրթու-
թեան կեանքէն յառաջացած կատա-
րելագործուած մարդը իր վերջին վը-
ճիռը կուտայ : Ասիա վերջին դատաս-
տանի հանդիսատեղին պիտի լինի, և
Արուսաղէմի մէջ, ուր երեք կրօնք
իրենց սրբավայրերն ունին, արդէն
սկսած է կատարուիլ, որ գրեալ է .
“ Իմ անունով սուտ մարդարէք կ'եւ

լեն և ամեն մէկը զձէզ կը կոչէ , ինձ
մօտ եկէք , ես եմ քրիստոս , բայց
դժու կացէք , ըստաբութիք , ես չեմ :

(Հարութեակիրակիւնն)

Ա Զ Դ Ա Ր Ա Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Թէհ քանի մի անգամ Ախօնի մի
ջոցաւ սղդարարութիւն եղած է , որ
առանց վկայագրի և կանխապէս ի-
մացընելու ։ Եթուցաւ , մանուկներ
ը զրկուին հեռաւոր քաղաքներէն
Ժառանգաւորաց վարժարանի անո-
ւամբ , բայց տակաւին կը շարունա-
կուի սոյն ապօրինաւորութիւնը , եւ
վարժարանի վարչութիւնը կըստիպ
սւիյետ դարձընել եկած մանուկնե-
րը , շատ անգամ բանագատուելով
ճանապարհի ծախք ևս վճարել : Ուս-
տի ներկայ ազդարարութեամբ յատ-
կապէս կը ծանուցուի մեր սիրելի աղ-
գայնոց , որ զգուշանան սոյնօրինակ
անտեղութիւններէ : Վասն զի վար-
ժարանի վարչութիւնը , ցարդ եղած
ապօրինաւորութենէն տաղտկացած ,
որոշած է այսուհետեւ , ՚ի պահան-
ջել հարկին Ժառանգաւորաց թիւը
լրացնելու համար , ինքնին քննել
և ընտրել ուխտաւոր մանուկներէն
այնպիսիները , որոնո աւելի առողջա-
կազմ , յաջողակ և ընդունակ են ուս
ման համար : Փորձով համոզուած
եկք , որ այս եղանակը աւելի արդիւ-

նաւոր է քանի թէ այլաց ընտրութեն
փառահերթ աշակերտ ընդունիլ վար-
ժարանի մէջ :

ԽԾՈՒՅԵԿԸԳԸՄԵԵԲ

— Ինչպէս որ Ախօնի Հունուար տմ-
ամթերթով յացոնած էինք , տեղւոյս
նորընտիր Կառավարիչ Վահեմ . Ըլի
Փաշացն քաղաքս ժամանեց , բաւա-
կան փափախութիւններ ըրաւ վարչա-
կան պաշտօնէից մէջ և սկսաւ շարու-
նակել իւր կառավարութիւնը . Տե-
ղական հասարակութիւնը խիստ գո-
հութեամբ կը նայի Վահեմ . Փաշացի
նորոգ սնօրէնութեանց վրայ և մեծ
բարիքներու կ'ակնկալէ նորա պաշ-
տօնէութենէն :

— Տերութեան կողմէն եկած հբ-
րահանգին համեմատ տեղւոյս Հայ-
ոց հասարակութիւնը քուեարկու-
թեամբ թաղական խորհրդաց անդա-
մեկը ընտրեց հետեւեալ հայազգի
Ուն . անձինքը՝ Պօղոս է. ֆէնտի թու-
մայեսն , Պ. Արայիկոն Վուրատեան ,
Պ. Հայրապետ Աւալանեան , Պ.
Յովհաննէս Եւետիսեան , և Վքոսար
որոշեց Պ. Դաւիթ Պետրոսեանը :
Սոյն հասուն և օրինաւոր ընտրու-
թիւնը յոյս կուտայ մեղ , որ այսու-
հետեւ Հայոց Հասարակութեան
դործքերը կը սնօրինուին ըստ պատ-
շաճի և ըստ արդարութեան :

— Ա . Տեղեաց Խնդրոյն շարունա-
կութիւնը կը հրատարակուի Ամա-
դրոյս յաջորդ թուալ :

Ց Ա Ն Կ

ԵՊԻՐԻ.

Այսոն Պետրոս .	73
Յազագս մահուան .	78
Կարգադրութիւն առողջութեան .	81
Վերադարձ Տ. Յակոբայ եպիսկոպոսի .	84
Հրաժեշտ պանտիստին .	86
Լեսար .	88
Հին և նոր Արուսաղէմ .	89
Շղարարութիւն .	96
Ժամանակագրական .	"

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՑՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամեն ամիս կը հրատարակուի Զհ երեսէ բաղկացեալ մէկուկես
ու թաճալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէջիախէ ։ Հանդերձ ճանապարհի
ծախքովը կանխիիկ վճարելի ։
- Գ. Ջատ տեսրակ առնել ուղղող ։ պէտք է ամեն մէկ տեսրին շրմ գու-
հեկան վճարել ։